Շաբաթական ամփոփ ակնարկ

Մակրո | Բաժնետոմսեր | Պարտատոմսեր | Կրիպտոարժույթներ | Հաշվետվություններ | Ֆյուչերսներ



Բարձրանում ենք միասին

26 Մայիս 2025

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

Նախորդ շաբաթ ԱՄՆ բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:



Էներգետիկայի և հումքային ապրանքների ոլորտներն անկում արձանագրեցին:

Մետաղները արձանագրեցին խառը արդյունքներ:

Նախորդ շաբաթ երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նվազեց:

Ինդեքսներ

Նախորդ շաբաթ S&P500-ը աճեց 0.88%-ով

Նախորդ շաբաթ Nasdaq-ը աճեց 1.21%-ով





Ինդեքսներ

Նախորդ շաբաթ Dow Jones-ը աճեց 2.17% -ով

Նախորդ շաբաթ Russell 2000-ը աճեց 2.71%-ով



Ինդեքսներ

Նախորդ շաբաթը S&P 500-ի համար աճի ութերորդ շաբաթն էր անընդմեջ, սակայն Nasdaq-ը, Russell 2000-ը և Dow-ն շաբաթվա կտրվածքով արձանագրեցին ավելի բարձր եկամտաբերություն:



Նախորդ շաբաթ «Փառահեղ յոթնյակը» արձանագրեց բացասական եկամտաբերություն (քանի որ NVDA-ն նվազեց ավելի քան 4%-ով), իսկ S&P 493-ը արձանագրեց դրական եկամտաբերություն:

Էներգետիկայի և հումքային ապրանքների ոլորտներն անկում արձանագրեցին, մինչդեռ կոմունալ ծառայությունների և տեխնոլոգիական սեկտորները գրանցեցին ամենաբարձր եկամտաբերությունը:



Բաժնետոմսեր | Կիսահաղորդիչներ

Կիսահաղորդիչների ոլորտի բաժնետոմսերի զամբյուղն ընթացիկ ամսում գրանցել է ավելի քան 15% աճ՝ շարունակաբար թարմացնելով պատմական առավելագույն արժեքները:



Բաժնետոմսերի շուկա | 1-ին եռամսյակի հաշվետվություններ

NVIDIA Corporation-ը (NVDA) հայտնել է 32.8 միլիարդ դոլար հասույթի մասին 2026 թվականի առաջին եռամսյակում, որը տարեկան մոտ 26%-ով ավելի է, ինչը պայմանավորված է նոր սերնդի GPU համակարգերի կայուն համաշխարհային պահանջարկով, գերմասշտաբային տվյալների կենտրոնների ընդլայնմամբ և ձեռնարկություններում արհեստական բանականության արագացված ներդրմամբ: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 0.81 դոլար, որը գերազանցում է շուկայի սպասումները:

Walmart-ը (WMT) 2026 թվականի առաջին եռամսյակում ստացել է 169.3 միլիարդ դոլարի հասույթ, որը տարեկան մոտ 5.5%-ով ավելի է, ինչը պայմանավորված է շուկայում մթերային ապրանքների հատվածում մասնաբաժնի ուժեղ աճով, թվային գնումների արագ ընդլայնմամբ և Walmart Connect-ի միջոցով բարձր շահույթ ապահովող գովազդով: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 0.65 դոլար, Walmart-ի ցուցանիշները գերազանցել են շուկայի սպասումները:

Բաժնետոմսերի շուկա | 1-ին եռամսյակի հաշվետվություններ

Home Depot (HD)-ն 2026 թվականի առաջին եռամսյակում ստացել է 35.4 միլիարդ դոլարի հասույթի, որը տարեկան կտրվածքով նվազել է մոտ 1.5%-ով, ինչը պայմանավորված է խոշոր չափի հայեցողական նախագծերի շարունակական անկմամբ, բնակարանային շուկայի պասիվությամբ և անբարենպաստ սեզոնային եղանակով, որը հետաձգել է բացօթյա հատվածի ակտիվությունը: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 3.40 դոլար, ինչը համապատասխանում է շուկայի սպասումներին:

TJX Companies-ը (TJX) հայտնել է 13.1 միլիարդ դոլար հասույթի մասին 2026 թվականի առաջին եռամսյակում, որը տարեկան մոտ 6%-ով ավելի է, ինչը պայմանավորված է հաճախորդների մեծ հոսքով, Marmaxx-ի և HomeGoods-ի գործարքների բացառիկ աճով և գնից զերծ արժեք ունեցող գնման ռազմավարությունների արդյունավետ իրականացմամբ: Մեկ բաժնետոմսի համար եկամուտը կազմել է 0.98 դոլար, ինչը գերազանցել է շուկայի սպասումները:

Տոկոսադրույքի սպասումներ | Պարտատոմսերի շուկա

Այժմ ակնկալվում է, որ 2026 թվականին ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը (ԴՊՀ) տոկոսադրույքը կբարձրացնի 25 բազիսային կետով (0.25 տոկոսային կետով):

Շաբաթական կտրվածքով կարճաժամկետ (2 և 5 տարեկան) պարտատոմսերի եկամտաբերություններն աճել են, իսկ երկարաժամկետ (7, 10 և 30 տարեկան) պարտատոմսերինը՝ նվազել:



Պարտատոմսերի շուկա | Դոլարի ինդեքս | Սպոտ ոսկի

Նախորդ շաբաթվա ընթացքում ոսկին չնչին անկում արձանագրեց, բայց բահպանեց 4500 ԱՄՆ դոլարի աջակցման մակարդակը:

Որոշակի տատանումից հետո ԱՄՆ դոլարի փոխարժեքը կոնսոլիդացվեց մի քանի հիմնական տեխնիկական մակարդակների միջև:

Մետաղների շրջանում լավագույն եկամտաբերությունն արձանագրեց պղինձը, մինչդեռ պլատինը կրեց ամենամեծ կորուստը: Արծաթը, ներօրյա տատանումներից հետո, շաբաթն ավարտեց գրեթե անփոփոխ մակարդակներում, իսկ ոսկին արձանագրեց չնչին անկում:

Ֆյուչերսներ | Նավթ

WTI տեսակի նավթի ֆյուչերսները շաբաթն ավարտեցին 100 դոլարից ցածր մակարդակներում:

Կրիպտոարժույթներ

Բիթքոյնը շաբաթվա ընթացքում կտրուկ անկում ապրեց մոտենալով 75,000 դոլարի մակարդակին:

Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ բաժնետոմսերը շարունակում են աճել

ԱՄՆ բաժնետոմսերը շարունակում են ռեկորդային բարձր մակարդակներ գրանցել, մինչդեռ սպառողների տրամադրության ինդեքսը նոր ցածրակետեր է սահմանում: Պատմականորեն այս երկու ցուցանիշները եղել են կորելացված:

ԱՄՆ կառավարությանն ավելի ցածր տոկոսադրույքներ են պետք

ԱՄՆ պետական պարտքի տարեկան տոկոսային ծախսերը մինչև 2036 թվականը կարող են աճել՝ կազմելով կառավարության եկամուտների 30%-ը, ինչը բոլոր ժամանակների ամենաբարձր ցուցանիշը կլինի:
Սա տեղի կունենա, եթե 10-ամյա պետական պարտատոմսերի եկամտաբերությունը հաջորդ տասնամյակում միջինում կազմի 4.70%: Սա նշանակում է, որ կառավարության եկամուտների գրեթե յուրաքանչյուր 3 դոլարից 1-ը կուղղվի պարտքի սպասարկմանը, ինչը ԵՐԵՔ անգամ ավելի բարձր է, քան 2022 թվականի մակարդակը: Միևնույն ժամանակ, երեքշաբթի օրը 10-ամյա պետական պարտատոմսերի եկամտաբերությունը կարճ ժամանակով հասավ 4.68%-ի, նախքան ուրբաթ օրվա իջնելը մինչև 4.56%-ի մակարդակին:



Sources: Congressional Budget Office, Committee for a Responsible Federal Budget.
Note: Estimate assumes all yields rise above baseline by 55 basis points.

CRFB.org

ԱՄՆ-ում բիզնեսներ են ստեղծում ռեկորդային տեմպերով

ԱՄՆ-ում բիզնես գրանցման դիմումների ամսական թիվը հասնում է մոտ 500,000-ի, որը մոտ է 2020 և 2021 թվականների համավարակից հետո գրանցված ամենաբարձր մակարդակին: Այնուամենայնիվ, դիմումները, որոնք, կհանգեցնեն աշխատողների վարձմանը, կազմում է ընդհանուրի մոտ 30%-ը: Վերջին 20 տարիների ընթացքում այս տոկոսը կիսով չափ նվազել է: Ավելին 3-ից 1-ն է, որ ի վերջո հանգեցնում է իրական աշխատակիցներով բիզնեսի ստեղծման: Սա նշանակում է, որ այսօր ստեղծվող նոր բիզնեսների մեծ մասը մեկ անձից է բաղկացած, որոնց մեծ մասը երբեք լրիվ դրույքով աշխատանք չի ապահովում:



Note: High-propensity applications are those that (a) are from a corporate entity, (b) indicate they are hiring employees, purchasing a business or changing organizational type, (c) provide a first wages-paid date (planned wages); or (d) are in manufacturing, retail, health care or restaurants/food service.
Source: US Census Bureau (based on Internal Revenue Service administrative data)

Bloomberg Opinion

Հետաքրքիր փաստեր

Համաշխարհային տեխնոլոգիական ֆոնդերը նախորդ շաբաթ գրանցել են 9.0 միլիարդ դոլարի ներհոսք, որը ամենամեծ շաբաթական ներհոսքն է 2025 թվականի հոկտեմբերից ի վեր: Սա նաև գրանցված 3-րդ ամենամեծ շաբաթական ներհոսքն է:
Արդյունքում, 4 շաբաթվա միջին զուտ ներհոսքը աճել է 4.0 միլիարդ դոլար: Տեխնոլոգիական ֆոնդերը ներհոսք են գրանցել 7 շաբաթ անընդմեջ: Միևնույն ժամանակ, ԱՄՆ տիեզերական ոլորտի ETF-ները վերջին ամսվա ընթացքում ներգրավել են 1.3 միլիարդ դոլար, արդյունքում կառավարման տակ գտնվող ակտիվները հասցրել է ռեկորդային 3.3 միլիարդ դոլարի:

Chart 12: Biggest weekly inflow to tech since Oct'25

Flows to tech funds, weekly vs 4wk-ma ($bn)



Source: BofA Global Investment Strategy, EPFR

BofA GLOBAL RESEARCH

Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ-ում գնաճային ճնշումները աճում են

Արտադրական PMI (The Purchasing Managers' Index) գների ինդեքսը մայիսին բարձրացել է մինչև 80 միավոր, ինչը ամենաբարձր ցուցանիշն է 2022 թվականի կեսերից ի վեր: Սա արտադրական ծախսերի ամենամեծ ամսական աճն է 2022 թվականի հունիսից ի վեր: Ինդեքսը փետրվարից ի վեր աճել է 18 միավորով, նման դինամիկա վերջին անգամ նկատվել է 2021-2022 թվականների պատմական գնաճի ժամանակ: Ընթացիկ աճը պայմանավորված է Իրանի պատերազմի հետ կապված մատակարարման սահմանափակումներով և էներգակիրների գների աճով: Արդյունքում, ծախսերի աճը հանգեցնում է աշխատատեղերի հետագա կորստի և բիզնեսներին դրդում է բարձրացնել ապրանքների և ծառայությունների գները:



Source: S&P Global PMI. ©2026 S&P Global.

Արհեստական բանականության հեղափոխությունը վերափոխում է տնտեսությունները

Հարավային Կորեայի արտահանումը մայիսի առաջին 20 օրերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է ռեկորդային՝ 52.6%-ով: Սա ապրիլի առաջին 20 օրերին գրանցված 49.4% աճի հետագա արագացումն է, ինչպես նաև աճի 4-րդ անընդմեջ ամիսը, երբ արձանագրվում է առնվազն 40.0% աճ: Այս դինամիկան հիմնականում պայմանավորված է կիսահաղորդիչների արտահանման տարեկան 202.1% աճով, ինչը խթանվել է արհեստական բանականության և տվյալների կենտրոնների նկատմամբ ձևավորված բարձր պահանջարկով: Ավելին, արհեստական բանականության ենթակառուցվածքներում շարունակական ներդրումների շնորհիվ համակարգչային արտադրանքի մատակարարումներն աճել են 305.5%-ով: Միևնույն ժամանակ, ներմուծումն ավելացել է 29.3%-ով, ինչի արդյունքում արտաքին առևտրային ավելցուկը հասել է 11 միլիարդ դոլարի:



Հետաքրքիր փաստեր

ETF-ների նկատմամբ ներդրողների պահանջարկը երբեք այսքան մեծ չի եղել

ԱՄՆ ETF-ները (բորսայում շրջանառվող ֆոնդերը) տարեսկզբից ի վեր արձանագրել են ռեկորդային՝ 852 միլիարդ դոլարի կապիտալի ներհոսք: Այս ցուցանիշն այժմ 33%-ով գերազանցում է 2025 թվականի տեմպը, ինչը հիմք է տալիս կանխատեսելու տարեկան ներհոսքի երրորդ անընդմեջ աճը: Սա նշանակում է, որ ներդրողներն ընթացիկ տարում յուրաքանչյուր առևտրային նստաշրջանի ընթացքում ETF-ներում ներդրել են միջինում 8.5 միլիարդ դոլար: Համեմատության համար նշենք, որ 2023 թվականի ցուցանիշը կազմել է 2.2 միլիարդ դոլար, ինչը 74%-ով ցածր է ներկայիս մակարդակից: Տեմպերի պահպանման դեպքում ԱՄՆ ETF-ների ընդհանուր ներհոսքը հաջորդ 18 առևտրային նստաշրջանների ընթացքում կգերազանցի 1 տրիլիոն դոլարը:



Source: Bloomberg as compiled by Citadel Securities, GMI, as of May 17, 2026. Figures are for illustrative purposes only. Past performance figures do not guarantee future results.

Կորպորատիվ հաշվետվությունների ցանկ

Այս շաբաթ 121 ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2026 թվականի առաջին եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են Costco Wholesale Corporation (COST), Royal Bank of Canada (RY), Dell Technologies (DELL), Marvell Technology (MRVL), PDD Holdings (PDD), Snowflake (SNOW), Autodesk (ADSK) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվությունները:

1	COST	Costco Wholesale Corp	Consumer Defensive	Discount Stores	USA	456.18B	53.48	1028.24
2	RY	Royal Bank Of Canada	Financial	Banks - Diversified	Canada	264.95B	18.12	189.71
3	DELL	Dell Technologies Inc	Technology	Computer Hardware	USA	192.59B	33.86	295.19
4	TD	Toronto Dominion Bank	Financial	Banks - Diversified	Canada	189.00B	12.74	111.87
5	MRVL	Marvell Technology Inc	Technology	Semiconductors	USA	171.90B	63.52	196.33
6	CRM	Salesforce Inc	Technology	Software - Application	USA	147.31B	23.06	180.07
7	PDD	PDD Holdings Inc ADR	Consumer Cyclical	Internet Retail	China	134.54B	10.15	94.52
8	BMO	Bank of Montreal	Financial	Banks - Diversified	Canada	113.65B	18.65	160.93
9	CM	Canadian Imperial Bank Of Commerce	Financial	Banks - Diversified	USA	107.01B	16.76	115.49
10	SNPS	Synopsys Inc	Technology	Software - Infrastructure	USA	100.52B	81.09	524.74
11	BNS	Bank Of Nova Scotia	Financial	Banks - Diversified	Canada	98.33B	16.55	79.78
12	SNOW	Snowflake Inc	Technology	Software - Application	USA	59.69B	-	172.20
13	AZO	Autozone Inc	Consumer Cyclical	Auto Parts	USA	56.13B	23.86	3406.50
14	ADSK	Autodesk Inc	Technology	Software - Application	USA	50.88B	46.07	240.99
15	ESLT	Elbit Systems Ltd	Industrials	Aerospace & Defense	Israel	35.92B	67.58	767.82
16	HEI	Heico Corp	Industrials	Aerospace & Defense	USA	35.50B	59.53	301.04
17	A	Agilent Technologies Inc	Healthcare	Diagnostics & Research	USA	32.49B	25.35	114.96
18	ZS	Zscaler Inc	Technology	Software - Infrastructure	USA	29.32B	-	182.37
19	P	Everpure Inc	Technology	Computer Hardware	USA	28.96B	160.06	87.20
20	NTAP	Netapp Inc	Technology	Software - Infrastructure	USA	27.50B	23.31	139.36

AraratBank

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

TIME (ET)	REPORT	PERIOD	ACTUAL	MEDIAN FORECAST	PREVIOUS
MONDAY, MAY 25					
	None scheduled, Memorial Day holiday				
TUESDAY, MAY 26					
9:00 am	S&P Case-Shiller home price index (20 cities)	March			0.9%
10:00 am	Consumer confidence	May			92.8
WEDNESDAY, MAY 27					
	None scheduled				
THURSDAY, MAY 28					
8:30 am	Initial jobless claims	May 23			
8:30 am	Durable-goods orders	April			0.8%
8:30 am	Durable-goods minus transportation	April			0.9%
10:00 am	New home sales	April			682,000
FRIDAY, MAY 29					
8:30 am	GDP (second revision)	Q1			2.0%
8:30 am	Personal income	April			0.6%
8:30 am	Personal spending	April			0.9%
8:30 am	PCE index	April			0.7%
8:30 am	PCE (year-over-year)				3.5%
8:30 am	Core PCE index	April			0.3%
8:30 am	Core PCE (year-over-year)				3.2%
8:30 am	Advanced U.S. trade balance in goods	April			
8:30 am	Advanced retail inventories	April			0.7%
8:30 am	Advanced wholesale inventories	April			1.3%
9:45 am	Chicago Business Barometer (PMI)	May			49.2

AraratBank

060 408 005, 060 408 002, 010 592 301
87 Pavstos Buzand St, Yerevan, 0002
brokerage@araratbank@am